ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Քննարկվել և հաստատվել է՝
«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի նիստում
« »____202 թ №

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ (ՄՈԴՈՒԼՆԵՐԻ) ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Ք. ԱՐԹԻԿ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ - Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ (ՄՈԴՈՒԼՆԵՐԻ) ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1 Քոլեջում մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլանների, առարկաների և մոդուլների մշակման, վերանայման, հաստատման գործընթացն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի:

1.2 Սույն կանոնակարգը սահմանում է «Արթիկի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի /այսուհետև՝ Քոլեջ/ տնօրենական և /կամ/ մանկավարժական խորհուրդը, հաստատում, ինչպես նաև նրանում լրացումներ և փոփոխություններ կատարում է կառավարման խորհուրդը:

1.3 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի կառավարման խորհրդի հաստատումից հետո:

1.4 Յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման համար Քոլեջը կազմում և հաստատում է կրթության կառավարման լիազոր մարմնի երաշխավորված ձևին համապատասխան ուսումնական պլան:

1.5 Ուսումնական պլանների և առարկայական/ մոդուլային/ ծրագրերի մշակման համար հիմք են հանդիսանում ՄԿՈՒԶԱԿԻ կողմից սահմանված պետական կրթական չափորոշիչները / այսուհետ ՊԿՉ/:

1.6 ՄԿՈՒԶԱԿԻ կողմից յուրաքանչյուր նոր սահմանված ՊԿՉ-ների համար հաստատվում են նոր ուսումնական պլաններ և առարկայական / մոդուլային/ ծրագրեր:

1.7 Ուսումնական պլանները և առակայի/մոդուլի ուսումնական ծրագիրը հիմնական կրթական ծրագրի պարտադիր մասն է և դասավանդվող առարկայի/մոդուլի նյութը, ուսումնական պարապմունքների տեսակները և ժամային բաշխվածությունը կանոնակարգող հիմնական ուսումնամեթոդական փաստաթղթերը:

1.8 Ուսումնական պլանները և առակայական /մոդուլային/ ծրագիրը մշակելու, վերանայելու և հաստատելու համար հիմք են հանդիսանում նաև լիազոր մարմնի որոշումները, հրամանները, գրությունները:

1.9 Քոլեջի դասախոսական կազմի և ամբիոնների համար ուսումնական ծրագրի առկայությունը պարտադիր է տվյալ առարկայի /մոդուլի/ ուսումնառությունը կազմակերպելու համար:

1.10 Ծրագրերը և ուսումնական պլանները (վերնայված և փոփոխված) պահպանվում են ամբիոնում մինչև գործածությունից դուրս գալը:

2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսումնական պլանը կազմող նախաձեռնող կողմերն են՝

•մասնագիտական ամբիոնը,

•ուսումնամեթոդական խորհուրդը:

2.1 Մասնագիտական ուսումնական պլանը կազմվում է հետևյալ բաղադրիչներով.

• ուսումնական պլանի վերնագիրը

, • ուսումնական գործընթացի ժամանակացույցը,

• շաբաթներով արտահայտված ժամանակի բյուջեն,

• ուսումնական գործընթացի պլանը,

• նախասիրական դասընթացների ցանկը,

• ընտրովի առարկաները,

• պրակտիկայի տվյալները,

• կաբինետների, լաբորատորիաների և արհեստանոցների ցանկը,

• ուսումնական պլանի պարզաբանումները:

2.1.1 Ուսումնական պլանի վերնագրային մասում տեղեկություններ են տրվում մասնագիտության և որակավորման անվանման, կրթության հիմքի, կրթության ձևի, կրթության աստիճանի և ուսուցման տևողության մասին /Հավելված 1/:

2.1.2. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը ցույց է տալիս տարվա տևողության բաշխումն ըստ կուրսերի և ուսումնական գործընթացների բաղադրիչների: 2.1.3.Յուրաքանչյուր տարվա ժամանակի բյուջեն կազմվող ժամանակացույցի մեջ ցույց է տրվում շաբաթների թվով և ըստ շաբաթների կատարված բաշխումների նշանակության նշումներով:

2.1.4 Ուսումնական գործընթացի պլանում ցույց է տրվում դասընթացների բաշխվածությունը՝ ըստ կուրսերի և կիսամյակների, յուրաքանչյուր կիսամյակում լսարանային պարապմունքների շաբաթների թիվը /Հավելված2/:

2.1.5 Ուսումնական գործընթացի պլանի տարեկան և կիսամյակային բաշխման մասում առարկաների և մոդուլների ժամաքանակները նշվում են ոչ թե շաբաթական ժամերով , այլ ընդհանուր ժամերով:

2.1.6 Առարկաները ըստ կիսամյակի բաշխելիս պետք է հաշվի առնել դրանց տրամաբանական հաջորդականության հանգամանքը, իսկ մոդուլների պարագայում՝ մուտքային պահանջները:

2.1.7 Նախասիրական առարկայի մասում ցույց է տրվում, թե ուսումնական հաստատությունը նախասիրական ինչ դասընթացներ է առաջարկում ուսանողներին:
2.1.8 Ընտրովի առարկայի դեպքում հաշվի են առնվում աշխատաշուկայի առանձնահատկությունները և գործատուների առաջարկությունները:

2.1.9 Պահուստային ժամերը բաշխվում են այն մոդուլների վրա, որոնց հատկացված ժամերը ըստ մասնագետների չեն բավականացնում համապատասխան արդյունք ապահովելու համար:

2.1.10 Պրակտիկաների մասում ցույց է տրվում, թե չափորոշչով նախատեսված պրակտիկաների շաբաթների սահմաններում յուրաքանչյուր տեսակի պրակտիկայի համար քանի շաբաթ է հատկացվում և որ կիսամյակում/Հավելված 3/ :

2.1.11 Ամփոփիչ ատեստավորման մասում ցույց է տրվում ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը:

2.2.12 Կաբինետների, լաբորատորիաների և արհեստանոցների մասում թվարկվում են ուսումնական հաստատությունում ստեղծվող միավորները: Ընդ որում, դրանք պետք է ներառեն չափորոշչով նախատեսվածները, ինչպես նաև կարող են ունենալ լրացուցիչ միավորներ:

2.2.13 ՈՒսումնական պլանի պարզաբանումների մասում տրվում են անհրաժեշտ բացատրություններ, որոնք կիրառման առումով ավելի հասկանալի են դարձնում ամբողջ ուսումնական պլանը: Այստեղ հիմնականում ներառվում են այն հարցերը, որոնք հնարավոր չի եղել ուսումնական պլանի համապատասխան բաժիններում հստակեցնել և կարող են տարընթերցման տեղիք տալ:

2.2.14 Ուսումնական պլանի հաստատումը և հետագայում նրանում կատարվող լրացումները և փոփոխությունները հաստատվում են տնօրենի կողմից ամբիոնում հավանության արժանանալուց, ուսումնամեթոդական խորհրդում երաշխավորվելուց և կառավարման խորհրդում քննարկվելուց հետո:

2.2.15.Յուրաքանչյուր ուսումնական տարում կատարվող լրացումները և փոփոխությունները հաստատվում են հավելվածի տեսքով և կցվում են հիմնական ուսումնական պլանին:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1 Նոր առակայի (մոդուլի) ուսումնական ծրագիրը կազմելու համար նախաձեռնող կողմերն են՝

• ամբիոնը,

• տվյալ դասընթացը պարապող դասախոսը

• ուսումնամեթոդական խորհուրդը

3.2 Ուսումնական ծրագիրը կազմվում է առարկան (մոդուլը) դասավանդող մասնագետների կողմից:

3.3 Հանրակրթական առարկաների ուսումնական ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա:

3.4 Դասընթացի / առարկայի/ ուսումնական ծրագրերը կազմելիս դասախոսները պետք է առաջնորդվեն ՄԿՈՒԶԱԿԻ կողմից տրամադրված ուղեցույցով, տվյալ մասնագիտական ուսումնական պլանով և սույն կանոնակարգի դրույթներով:

3.5 Մոդուլային ուսումնական ծրագրերը կազմելիս ամբիոնի դասախոսները պետք է առաջնորդվեն ՄԿՈՒԶԱԿԻ կողմից մշակված ՊԿՉ-ներով, տվյալ մասնագիտական ուսումնական պլանով և սույն կանոնակարգի դրույթներով:

3.6 Ուսումնական ծրագիրը հաստատվում է տնօրենի կողմից՝ ամբիոնում հավանության արժանանալուց, ուսումնամեթոդական խորհրդում երաշխավորվելուց և կառավարման խորհրդում քննարկվելուց հետո /Հավելված 4/:

3.7 Դասընթացի / առարկայի/ ուսումնական ծրագրերի կառուցվածքը ներառում է՝
•առարկայի անվանումը,

•առարկայի նպատակը ,

•առարկայի տևողությունը,

տեսական ուսուցում՝ ..... Ժամ

գործնական աշխատանք՝ .....ժամ

•ուսումնառության թեմաները,

•գնահատման կարգը,

•թեմա 1. Նշվում է 1-ին թեմայի ձևակերպումը,

•թեմայի ուսուցման նպատակը,

•ծրագրային մանրամասներ,

•ուսուցման մեթոդները և անհրաժեշտ ռեսուրսները,

•ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝

տեսական ուսուցում՝ ..... Ժամ

գործնական աշխատանք՝ .....ժամ .....

•թեմատիկ պլան

3.8 Մոդուլային ուսումնական ծրագրերը կազմվում են հետևյալ բաղադրիչներով/Հավելված 5/.

•մոդուլի անվանումը,

•մոդուլի դասիչը,

•մոդուլի նպատակը,

•մոդուլի տևողությունը,

•մուտքային պահանջները,

•ուսումնառության արդյունքները

՝ արդյունք 1. գրվում է 1-ին արդյունքի ձևակերպումը

արդյունք 2. գրվում է 2-րդ արդյունքի ձևակերպումը ....

•մոդուլի գնահատման կարգը,

•արդյունք 1. Նշվում է 1-ին արդյունքի ձևակերպումը կատարման չափանիշները

ա/ բ/ ....

•գնահատման միջոցը ,

•ուսուցման մեթոդները և անհրաժեշտ ռեսուրսները,

•ուսուցման երաշխավորված ժամաքանակը

տեսական ուսուցում՝ ..... ժամ

գործնական աշխատանք՝ .....ժամ .....

•թեմատիկ պլան

3.9 Ընտրովի առարկաների և պահուստային ժամերի ծրագիրը կազմելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի առանձնահատկությունները և գործատուների առաջարկությունները:

3.10 Ծրագրերի համապատասխանությունը ՊԿՉ-ին և ուսումնական պլանին ապահովում է ամբիոնի վարիչը: Արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

3.11 Ծրագիրը համարվում է ընդունված, եթե այն համապատասխանում է ՊԿՉ-ի պահանջներին , ուսումնական պլանին և սույն կանոնակարգի դրույթներին:

3.12 Պարբերաբար իրականացվում է ծրագրերի արդյունավետության գնահատում մասնագետի կողմից: Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի քննարկմանը:

Հավելված 4 / 1-ին էջ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

«Հաստատում եմ» Արթիկի
պետական քոլեջ ՊՈԱԿ – ի տնօրեն

_____ Ա. Ղուլիջօղլյան

«_____» _____ 202_ թ.

ԾՐԱԳԻՐ

«_____»

ԱՌԱՐԿԱՅԻ /ՄՈԴՈՒԼԻ/

ՄԻՋԻՆ /ՆԱԽՆԱԿԱՆ/ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

«_____»

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

դասախոս՝

_____

_____

_____

_____

Ծրագիրը քննարկվել և հավանության է արժանացել՝

«_____

_____»

ամբիոնի

____ ____ 202_թ. թիվ _____ նիստում

Ամբիոնի վարիչ՝ _____

ՈՒսումնամեթոդական խորհրդի _____ _____ 202_թ. թիվ _____ նիստի որոշմամբ երաշխավորվել է ուսումնական գործընթացում ներդնելու համար

ՈՒսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ _____

Կառավարման խորհրդի _____ _____ 202_թ. թիվ _____ նիստում քննարկվել և հավանության է արժանացել Կառավարման խորհրդի

նախագահ՝ _____

հավելված 5

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «.....» (վերցվում է չափորոշչից)	
Մոդուլի դասիչը	.....(վերցվում է չափորոշչից)
Մոդուլի նպատակը	.....(վերցվում է չափորոշչից)
Մոդուլի տևողությունը	.....(վերցվում է չափորոշչից) տեսական ուսուցում՝ .....ժամ գործնական աշխատանք՝ .....ժամ
Մուտքային պահանջները	(վերցվում է չափորոշչից)
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ..... 2) .....
Մոդուլի գնահատման կարգը	(վերցվում է չափորոշչից)
Ուսումնառության արդյունք 1	(վերցվում է չափորոշչից)
Կատարման չափանիշներ	(վերցվում է չափորոշչից)
Գնահատման միջոցը	Գնահատման միջոցը նկարագրում է այն յուրահատուկ մոտեցումը կամ մոտեցումները, որոնց կիրառմամբ պետք է ստուգվի յուրաքանչյուր ուսանողի կողմից սահմանված կատարման չափանիշներին համապատասխան տվյալ արդյունքի ձեռքբերումը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Այստեղ նշվում է, թե ինչ նպատակահարմար մեթոդներ են երաշխավորվում ուսուցման համար, և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ լինելու ուսուցման ընթացքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ ..... ժամ գործնական աշխատանք՝ .....ժամ
Ուսումնառության արդյունք 2	(վերցվում է չափորոշչից)
Կատարման չափանիշներ	(վերցվում է չափորոշչից)
Գնահատման միջոցը	Գնահատման միջոցը նկարագրում է այն յուրահատուկ մոտեցումը կամ մոտեցումները, որոնց կիրառմամբ պետք է ստուգվի յուրաքանչյուր ուսանողի կողմից սահմանված կատարման չափանիշներին համապատասխան տվյալ արդյունքի ձեռքբերումը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Այստեղ նշվում է, թե ինչ նպատակահարմար մեթոդներ են երաշխավորվում ուսուցման համար, և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ լինելու ուսուցման ընթացքում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ ..... ժամ գործնական աշխատանք՝ .....ժամ